ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳՈՏՈՒԹՅՈՒՆ

GERARD CHALIAND, YVES TERNON, Le genocide des Armeniens, 1915—1917, la memoire du siecle, Bruxelles, 1980, 192 p.

ԺԵՐԱՐ ՇԱԼԻՅԱՆ, ԻՎ ՏԵՐՆՈՆ, Հայերի ցեղասպանությունը, 1915—1917, դարի հուշապատում, Բրյուսել, *1980, 192 էջ։*

Սուլթանական Թուրքիան իրենից ներկայացնում էր ռազմաֆեոդալական-թեոկրատիկ բռնապետություն, ուր քրիստոնյա ժողովուրդները ենթարկվում էին սոցիալական, ազգային և կրոնական ծանր ճնշման ու հալածանքների և պարբերաբար ֆիզիկական բնաջնջման։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին սուլթանական Թուրքիայի կառավարող շրջանները կատարեցին մեծագույն հանցագործություն մարդկության և քաղաքակրթության հանդեպ, կազմակերպեցին հայ ժողովրդի զանգվածային ցեղասպանությունը։ Այդ ցեղասպանության հետևանքով արևմտահայությունը տվեց ավելի քան 1,5 մլն. զոհ կամ իր ընդհանուր թվի երկու երրորդը, իսկ հայ ժողովուրդը՝ իր ամբողջ կազմի մոտ մեկ երրորդը։ Արևմտահայության բեկորները եղան բնավեր, տանջվեցին աքսորի արյունալի ճանապարհներին, մաքառեցին զանազան հիվանդությունների դեմ, կիզվեցին անապատի արևի տակ և ցաքուցրիվ եղան։ Չնայած այն հանգամանքին, որ հայ ժողովուրդը ոչ մի պետության և ժողովրդի դեմ պատերազմ չէր հայտարարել և պաշտոնապես պատերազմի մասնակից կողմ չէր, այնուամենայնիվ, իր ընդհանուր թվի համեմատությամբ, դարձավ պատերազմում առավել զոհ կրած ժողովուրդը։

Մի ամբողջ ժողովրդի՝ XX դարի առաջին ցեղասպանության ուսումնասիրությանը նվիրված են ստվարահատոր փաստաթղթերի ժողովածուներ և բազմաթիվ ուսումնասիրություններ։ Վերջին ժամանակներս հայ ժողովրդի Մեծ եղեռնի պատմությունը ուսումնասիրության առարկա է դարձել նաև Արևմտյան Եվրոպայում։ Այսպես, օրինակ, հիշատակենք թեկուզ Ժ. Մ. Գարզուի և Ի. Տերնոնի գրքերը[1]*։*

Խնդրո առարկա հարցի շուրջ վերջերս լույս տեսավ մի նոր գիրք ևս՝ «Հայերի ցեղասպանությունը, 1915—1917, դարի հուշապատում» վերնագրով, որի հեղինակներն են Ժ. Շալիյանը և Ի. Տերնոնը[2]*։ Աշխատության առաջին մասը, որը նվիրված է արևմտահայերի կոտորածին, գրել է Ի. Տերնոնը, դա նրա առաջին գրքի հակիրճ վերաշարադրումն է։ Տալով Արևմտյան Հայաստանի բնաաշխարհագրական և տնտեսական դրության բնութագրումը, հեղինակը, անհերքելի փաստերով հաստատում է, որ չնայած թուրքական իշխանությունների հարատև ճնշումներին, կողոպուտին և այլազան հետապնդումներին, հայերը, այնուամենայնիվ, կազմում էին Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության մեծամասնությունը և հիմնական արտադրող ուժը (էջ 18)։ Ցույց է տրված, որ դեռևս մինչև պատերազմի պայթումը երիտթուրքական կառավարողները, շռայլելով սին խոստումներ, ստիպում էին, որպեսզի արևմտահայությունը, առաջիկա ռազմական գործողություններին զուգընթաց, արևելահայերին դրդի քայքայիչ գործողություն-*

---

[1] Jean-Marie Garzou, Un genocide exemplaire, Armenie, 1915, Paris, 1975; Yeves Ternon, Les Armeniens, histoire d'un genocide, Paris, 1977. *Այս գրքերի մասին տե՛ս Վ. Բայբուրդյանի և Հ. Թոփուզյանի գրախոսականները ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» ամսագրում (1979, № 1, էջ 89—96 և 1978, № 2, էջ 107—110)։*

[2] *Ի դեպ, պետք է նշել, որ Ի. Տերնոնը Ջ. Գ. Քյաբաքչյանի ընկերակցությամբ 1980 թ. լույս է ընծայել նաև մեկ ուրիշ գիրք Հայաստանի մասին։*

ներ կազմակերպել ռուսական բանակի դեմ։ Սակայն Թուրքական կառավարողների այդ խարդավանքները մնում են անարդյունք (էջ 37)։

Ինչպես հայտնի է, 1914/1915 թթ. ձմռանը Թուրքական բանակը Էնվերի գլխավորությամբ սոսկալի պարտություն կրեց Սարիղամիշի ճակատամարտում. դրա մեղքը կառավարողները բարդում են հայերի վրա։ 1915 թ. ապրիլի 24-ին Կ. Պոլսում ձերբակալվում են ավելի քան հինգ հարյուր հայ ականավոր մտավորականներ։ Սրանց մի մասին տեղում շուտով կախաղան բարձրացրին, իսկ մյուսին՝ գաղանաբար ոչնչացրին աքսորի ճանապարհին։ Այնուհետև սկսվեց հայերի զանգվածային տեղահանությունը սահմանամերձ շրջաններից և նրանց գաղանային խոշտանգումները։ Արևմտահայերը, ինչպես գրում է Ի. Տերնոնը, Թուրքական կառավարության կողմից անհիմն մեղադրվում են դավաճանության մեջ։ Այնինչ ով-ով, բայց երիտթուրքական Եռապետության անդամներ Էնվերը, Թալաաթը և Ջեմալը ավելի քան համոզված էին, որ արևմտահայերը իրենց զինվորական պարտականությունը Թուրքիայի հանդեպ կատարում էին որպես նրա օրինապահ հպատակներ։ Թեկուզ հիշատակենք այն, որ Սարիղամիշի տակ Էնվերը գերի ընկնելուց ազատվել է միայն հայ զինվորի օգնությամբ և որի ծնողներին նա այս կապակցությամբ հատուկ շնորհակալագիր է ուղարկել։ Արևմտահայ զինվորների պատերազմում ցուցաբերած մասնակցության համար Էնվերը նույնիսկ շնորհակալություն է հայտնել Կ. Պոլսի հայոց պատրիարքին։ Հեղինակը զտնում է, որ արևմտահայերը ոչ թե ապստամբել են Թուրքական բանակի թիկունքում, այլ մղել են սոսկ ինքնապաշտպանական մարտեր (էջ 7)։

Այնուհետև սկսվում է Կիլիկիայի հայության աքսորը, այս անգամ առանց որևէ պատճառաբանության։ Հեղինակը ճիշտ է նշում, որ Կիլիկիայի հայության աքսորը չէր կարող նույնիսկ վերոհիշյալ «պատճառներով» հիմնավորվել, քանի որ Կիլիկիան սահմանամերձ շրջան չէր և շատ հեռու էր ռազմական գործողությունների թատերաբեմից (էջ 10)։ Ի. Տերնոնը ցույց է տալիս, թե ինչպես մի քանի ամսվա ընթացքում Արևմտյան Հայաստանը վերածվում է մի ահռելի սպանդանոցի (էջ 9)։ Ջեռ խնայվում նույնիսկ երեխաները, կանայք, ծերունիները և հիվանդները։ Հեղինակը այնուհետև շեշտում է այն հանգամանքը, թե ինչպես մի քանի ամսվա ընթացքում Արևմտյան Հայաստանը ավերվում է հիմնահատակ, գյուղատնտեսությունը, արհեստները և առևտուրը խպառ քայքայվում են (էջ 9)։ Դեռ ավելին, Թուրքական իշխանությունները հայերի աքսորի հենց սկզբից սպառնում են բոլոր նրանց, ովքեր կփորձեին օգնություն ցույց տալ հայերին (էջ 8)։

Բայց, ցավոք, Ի. Տերնոնի ինչպես՝ առաջին գրքում, այնպես էլ այստեղ վրիպել է Թուրքիայի սիոնիստ-հրեական և մահմեդական-հրեական (դյոնմե) համայնքների վերնախավի աջակցությունը Թուրքիայի կառավարող շրջանների հայահալած քաղաքականությանը՝ ինչպես առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, այնպես էլ նրա ընթացքում։

Աշխատության երկրորդ մասը գրել է Ժ. Շալիյանը։ Նա ևս փաստական հարուստ նյութի հիման վրա հերքում է Թուրքական պաշտոնական մարմինների, իսկ այնուհետև նաև Թուրքական պատմագիտության այն հերյուրանքները, թե հայերը սպառնում էին Թուրքական բանակի թիկունքին և որպես թե հայերը սպանել են մոտ 1 մլն Թուրքեր (էջ 41—42)։ Հեղինակը վկայակոչում է Հոհաննես Լեփսիուսի կազմած ժողովածուից բազմաթիվ փաստաթղթեր՝ հայկական կոտորածների մասին։ Բերված են մի շարք նյութեր երիտթուրքական պարագլուխներ Էնվերի ու Թալաաթի հետ ամերիկյան դեսպան Հ. Մորգենթաուի բանակցություններից վերոհիշյալ հարցի շուրջը։ Այսպես, օրինակ, ի պատասխան Հ. Մորգենթաուի հարցման, Թալաաթը նրան հանդիմանում է հետևյալ կերպ. «Իսկ Դուք ինչո՞ւ եք այդքան հետաքրքրվում հայերով։ Չէ՞ որ Դուք հրեա եք, իսկ նրանք՝ քրիստոնյաներ։ Մահմեդականները և հրեաները (իմա՝ հուդայականները) ավելի լավ կարող են իրար հասկանալ։ Ինչու չե՞ք թողնում, որ մենք այդ քրիստոնյաների հետ կատարենք այն, ինչ որ ցանկանում ենք» (էջ 109)։ Իսկ Հ. Մորգենթաուի այն հարցին, թե ենթադրենք, որ մի քանի հայեր դավաճանել են մեզ, բայց արդյո՞ք դա հիմք է մի ամբողջ ժողովրդի, այդ թվում կանանց և երեխաների ոչնչացման համար, Թալաաթը պատասխանել է. «Դա առարկության ենթակա չէ»։ Իսկ Էնվերին ուղղված այն հարցումին, թե հայերի կոտորած կազմակերպելով դուք տնտեսական տեսակետից ավերում եք ձեր երկիրը, հետևել է հետևյալ պատասխանը. «Այժմ մեզ համար տնտեսական բնույթի նկատառումները չէ, որ կարևոր են» (էջ 117—118)։

Ինչպես հայտնի է, պատերազմում կրած պարտությունից հետո սուլթանական կառավարությունը, դաշնակից պետությունների պահանջով, կազմակերպեց դատավարություն նախկի-

նում կառավարող երիտթուրքական կուսակցության պարագլուխների դեմ։ Բայց, ինչպես նշում է հեղինակը, «հայերի համար նյութերդ տեղի չունեցավ» (էջ 121)։ Էնվերը, Թալաաթը և Ջեմալը մինչ այդ արդեն ճողոպրել էին Բեռլին և շնտեղին մեղադրյալների աթոռին։ Հեղինակը շարադրում է թուրքական նոր կառավարության ղեկավար Դամադ Ֆերիտ-փաշայի մասնակցությունը Փարիզի բանակցություններին, որտեղ Թուրքիան մեղադրվում է այլազգիների դեմ կիրառվող ճնշումների և հետապնդումների մեջ (էջ 125), և դրանից հետո է, որ դատարանը երիտթուրքերին սկսում է մեղադրել ոչ միայն Թուրքիային պատերազմի մեջ ներքաշելու, այլ նաև հայկական կոտորածների կազմակերպման հարցում։ Հեղինակը մեղադրական եզրակացությունից իսկ քաղված բազմաթիվ պաշտոնական փաստաթղթերով ցույց է տալիս հայերի խոշտանգումները (էջ 127—132)։ Դատարանը երիտթուրքական պարագլուխներին, այդ թվում նաև Էնվերին, Թալաաթին և Ջեմալին, դատապարտում է մահվան։ Վերջիններին, սակայն, Գերմանիան չի հանձնում Թուրքիային, և այդ իսկ պատճառով դատական վճիռը նրանց նկատմամբ մնում էր որպես դատարկ թղթի կտոր։

Այնուհետև Ժ. Շալիյանը շարադրում է ժողովրդական վրիժառու Ս. Թեհլերյանի դեմ Բեռլինում կազմակերպված դատավարությունը։ Հեղինակի ընութագրմամբ, չնայած դատարանը բուրժուական էր, դատավարությունը Թեհլերյանի դեմ վերածվում է դատավարության ընդդեմ Թալաաթի (էջ 130)։ Դատավարությունը տևում է ընդամենը երկու օր՝ 1921 թ. հունիսի 2—3-ը։ Անհերքելի փաստերով ապացուցվում է, որ հայկական կոտորածի գլխավոր կազմակերպիչը Թալաաթն է։ Ս. Թեհլերյանը հայտարարվում է անպարտ և ազատվում որևիցե պատասխանատվությունից։

Գրքում բերված են նաև բազմաթիվ լուսանկար փաստաթղթեր հայ ժողովրդի մեծ բարեկամ Արմին Վեգների անձնական արխիվից, նրա բաց նամակը ԱՄՆ-ի պրեզիդենտ Վ. Վիլսոնին (1919 թ. հունվար) հայկական եղեռնի մասին և այլն։

Ժ. Շալիյանի և Ի. Տերոնոնի այս աշխատությունը լավագույն պատասխանն է թուրքական և արևմտաևրոպական այն պատմաբաններին (օրինակ՝ վերջերս ի հայտ եկած Մոզերին[3]), որոնք որոշակի նպատակներով և շահագրգռվածությամբ խեղաթյուրում են հայ ժողովրդի պատմությունը, արդարացնում նրա անմեղ զոհերի դահիճներին։

Ժ. Շալիյանի և Ի. Տերոնոնի գրքի արժանիքը չի սահմանափակվում նրանով, որ նրանց այս աշխատության միջոցով օտար ընթերցողը ծանոթանում է հայ ժողովրդի կրած մեծ ցեղասպանության մանրամասներին։ Նրանց գիրքը միաժամանակ մի լուրջ հիշեցում է ժամանակակից իմպերիալիստներին, որոնք, մոռանալով ոչ հեռու պատմության դասերը, ճնշում են ժողովուրդների պայքարը հանուն իրենց ազգային ու սոցիալական ազատության, կազմակերպում են նրանց զանգվածային կոտորածներ՝ իրենց իմպերիալիստական նպատակներին հասնելու համար։

ՌԱՖԻ ԿՈՆԴԱԿՉՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու
ՍԵՐԳԵՅ ՍԻՄՈՆՅԱՆ

---

[3] Pierre A. Moser, Armeniens, ou est la realite, Paris. 1980 (Պ. Ա. Մոզեր, Հայերը, որտե՞ղ է իրականությունը)։ Պետք է նշել, որ հեղինակը իր այս գրքում խեղաթյուրում է նաև ՍՍՀՄ-ի արտաքին քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ։